



Գրերի գյուտը ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

301 թվականին Հայաստանն առաջինը աշխարհում, որպես պետական կրոն, ընդունեց քրիստոնեությունը: Հեթանոսության համեմատ քրիստոնեությունը շատ ավելի զարգացած և մարդկային մտքի առաջադիմությանը նպաստող կրոն էր: Նրա Սրբազան գիրքը Աստվածաշունչն է՝ իր Հին և Նոր Կտակարաններով: Սա տարբեր ժամանակաշրջաններում ստեղծված պատմական և գեղարվեստական մեծ արժեք ունեցող երկերի ժողովածու է, որն ընդգրկում է քրիստոնեության հիմնական գաղափարները և բարոյախոսությունը: Շուրջ երկու հազար տարի այդ բարոյախոսությամբ է դաստիարակվել քաղաքակիրթ մարդկության մեծագույն հատվածը, և այդ գաղափարներն են արժարժել նրա արվեստն ու գրականությունը:

Քրիստոնեության՝ որպես պետական կրոնի հռչակումը Հայաստանում կատարվեց Արշակունյաց թագավորության խոշոր գահակալներից մեկի՝ Տրդատ Մեծի օրոք: Իսկ նոր կրոնի տարածումը երկրում գլխավորեց Հայոց առաջին կաթողիկոս Գրիգոր Լուսավորիչը: Նրա անունով էլ Հայ եկեղեցու դավանանքը կոչվում է Լուսավորչական կամ Գրիգորյան:

Ըստ ավանդության՝ Հայաստանում քրիստոնեությունն արմատավորել են դեռևս Հիսուս Քրիստոսի աշակերտներ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները: Այդ պատճառով էլ Հայ եկեղեցին կոչվում է նաև Առաքելական:

Անհրաժեշտ է նշել, որ դրսից ներմուծված կրոնը Հայաստանում աստիճանաբար ազգայնացվեց: Հայ եկեղեցին ընդունեց իր ինքնուրույն դավանանքը: Նա ընդհանուր քրիստոնեական ծեսերից զատ ստեղծեց իր յուրահատուկ ծեսերը: Քրիստոնեական մի շարք տոների մեջ առատորեն թափանցեցին հայկական հեթանոսական հավատալիքներն ու արարողությունները, և այդպիսով ստեղծվեցին զուտ հայկական քրիստոնեական տոներ (Վարդավառ, Ծառզարդար, Բարեկենդան և այլն): Ընդհանուր քրիստոնեական սրբերի շարքում հայտնվեցին նաև հայ սրբերը: Այնպես որ, քրիստոնեությունը Հայաստանում դարձավ ոչ միայն պետական, այլև ազգային կրոն: Նրա հիման վրա ծաղկեց հայ միջնադարյան հոգևոր մշակույթը:

Ավերված հեթանոսական տաճարների տեղում և նրանց որոշ ավանդույթներով կառուցվեցին քրիստոնեական տաճարներ, որոնք հայ ազգային ճարտարապետության նոր, առավել բարձր աստիճանն են ներկայացնում և խոր հետք են թողել այլ քրիստոնյա ժողովուրդների եկեղեցական ճարտարապետության վրա:

303 թվականին արդեն հիմնադրվեց Էջմիածնի Մայր տաճարը, որը դարձավ հայության հոգևոր կենտրոնը: Գրիգոր Լուսավորչի հիմնած վանքերից է նաև Արցախի նշանավոր Ամարասը:

Ճարտարապետական արվեստի հետ զարգացավ նաև հայ ազգային կերպարվեստը՝ նկարչությունը, քանդակագործությունը: Հայկական ավանդական ծայնեղանակների հիման վրա վերելք ապրեց երաժշտությունը, հատկապես ժամերգությունն ու մեր անզուգական պատարագը...

Քրիստոնեության ընդունումից որոշ ժամանակ անց բուռն ծաղկում ապրեց նաև հայ գրականությունը, ինչին նպաստեց մեկ այլ կարևորագույն իրողություն՝ գրերի գյուտը:

387 թվականին Հայաստանը բաժանվել էր երկու մասի: Երկրի մեծ մասը ենթարկվել էր Պարսկաստանի, մյուս մասը՝ Բյուզանդիայի գերիշխանությանը: Բյուզանդական մասում շուտով հայկական պետականությունը լիովին վերացավ, իսկ պարսկական մասում շարունակեց իր կիսանկախ գոյությունը մինչև 428 թվականը:

Պարսկաստանը, ձգտելով ծուլել հայությանը, ցանկանում էր Հայաստանում վերացնել քրիստոնեությունը և տարածել պարսկական կրոնը՝ զրադաշտականությունը, որը լիովին խորթ էր մեր ժողովրդի էությանը:


Բյուզանդիան, իր հերթին, ձգտում էր հայերին դարձնել հունադավան, Հունական եկեղեցու հետևորդ, ըստ էության, նույնպես ցանկանալով մեր ժողովրդին կտրել իր ազգային արմատներից:

Նշված պայմաններում կենսական անհրաժեշտություն էր դառնում հայկական ինքնուրույն գրի ու գրականության ստեղծումը: Հակառակ դեպքում՝ իր լեզուն, կրոնը և պետականությունը կորցնելու եզրին կանգնած հայ ժողովուրդն առհասարակ կդադարեր գոյություն ունենալ:

Հայկական գիր-գրականության ստեղծման անհրաժեշտությունը թելադրված էր նաև մեկ այլ կարևոր հանգամանքով: Նոր՝ քրիստոնեական կրոնի ուսուցումը և եկեղեցական պաշտոնեությունն ամբողջ 4-րդ դարում կատարվում էին օտար լեզուներով՝ հունարեն և ասորերեն: Ուստիև ետ էր մղվում ազգային լեզուն՝ հայերենը, և արգելքներ էին ստեղծվում պետական կրոն դարձած քրիստոնեության բավարար ընկալման և նրա հայացման ճանապարհին:

Բոլոր այս խնդիրները քաջ գիտակցել են ժամանակի հայոց իմաստուն այրերը, մասնավորապես՝ Մեսրոպ Մաշտոցը: Նա հայ միջնադարյան գրականության ակունքներին կանգնած մի վիթխարի ու լուսավոր անհատականություն է:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ (362-440)



ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Առկա աղբյուրների հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Մեսրոպ Մաշտոցը ծնվել է 362 թվականի փետրվարի 17-ին Տարոն գավառի Հացեկաց գյուղում՝ կիսաազնվական Վարդանի ընտանիքում: Ստացել է հունական կրթություն, տիրապետել է նաև պարսկերենին, ասորերենին, վրացերենին, աղվաներենին:

Մոտ 385-388 թվականներին Մաշտոցը հաստատվում է Հայոց Արշակունյաց թագավորության մայրաքաղաք Վաղարշապատում և պաշտոնավարում է Խոսրով Դ թագավորի արքունիքում որպես ատենադպիր ու թարգմանիչ, ապա նվիրվում է ռազմական գործին:

395-396 թվականներին Մաշտոցը դառնում է հոգևորական, քարոզիչ-վարդապետ և զբաղվում մանկավարժությամբ: Աշակերտների հետ շրջագայում է Հայաստանի տարբեր գավառներում և տարածում քրիստոնեական վարդապետությունը: Լինում է Վասպուրականի Գողթն գավառում և Սյունիքում, հիմնում է քրիստոնեական համայնքներ, եկեղեցական դասեր՝ իր շուրջը համախմբելով հետևորդների ու նորանոր աշակերտների:

Ուսուցչական և քարոզչական գործունեության ժամանակ Մաշտոցն Աստվածաշունչը բանավոր թարգմանում էր հայերեն՝ ժողովրդին հասկանալի դարձնելու համար: Այս շրջանում, ահա, նա մտադրվում է ստեղծել հայկական գրեր՝ Աստ-

վածաշունչը թարգմանելու և, առհասարակ, ազգային հայալեզու դպրություն ու գրականություն ստեղծելու համար: Դրա կարիքը նա զգացել էր նաև արքունիքում գործելիս՝ կանխատեսելով հայկական թագավորության մոտալուստ անկումը:

Հայ ժողովրդին ճուլման վտանգից փրկելու համար Մաշտոցը կազմում է մի հրատապ ծրագիր՝ հայացնել եկեղեցական արարողությունները, հայերեն թարգմանել քրիստոնեական գրքերը, ստեղծել, ինքնուրույն հայերեն գրականություն և այդպիսով վերականգնել մասնատված հայրենիքի հոգևոր և մշակութային միասնությունը: Այդ միասնությունն էլ հիմք պիտի դառնար հայկական միացյալ և հզոր պետականության վերականգնման համար:

Վերադառնալով Վաղարշապատ, Մաշտոցն իր ծրագիրը հայտնում է կաթողիկոս Սահակ Պարթևին, որը նույնպես կենտրոնացված հայկական պետականության ու մշակույթի ջերմ պաշտպան էր: Կաթողիկոսը սիրով ընդունում և խրախուսում է մաշտոցյան ծրագիրը: Եվ պետական բախտորոշ նշանակություն ունեցող ազգային այդ ծրագիրը Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը ներկայացնում են Խոսրով Դ-ին հաջորդած Վռամշապուհ թագավորին:

Պարզվում է, որ հայ արքան նույնպես մտահոգված է եղել այդ խնդրով: Նա տեղեկացնում է, որ Միջագետքում Դանիել անունով ասորի եպիսկոպոսի մոտ հայերեն նշանագրեր (տառեր) կան: Պալատականներից մեկի՝ Վահրիճի միջոցով Վաղարշապատ են բերվում դանիելյան նշանագրերը: Դրանք կան հին մեհենագրերի մնացորդներ էին, կան Գրիգոր Լուսավորչի ժամանակ ստեղծված և ինչ-ինչ պատճառներով չգործածված տառեր:

Մաշտոցը որոշ ժամանակ դանիելյան նշանագրերով կատարում է թարգմանական և ուսուցողական փորձեր: Պարզվում է, սակայն, որ այդ գրերը բավարար չափով չեն համապատասխանում հայերենի հնչյունաբանությանը: Այդ ժամանակ Վռամշապուհ թագավորի հրամանով և Սահակ Պարթև կաթողիկոսի երաշխավորությամբ Մեսրոպ Մաշտոցը մի խումբ աշակերտներով ու աջակիցներով մեկնում է ասորական և հունական կրթական կենտրոններ: Լինում է նախ Ամիդ և Եդեսիա քաղաքներում, հայոց գրերի մասին խորհրդակցում է ասորի հեղինակավոր հոգևորականների հետ: Ոչ մի արդյունքի չհասնելով՝ աշակերտների մի մասին ուղարկում է Սամոսատ՝ հունական կրթություն ստանալու, իսկ մյուս մասին թողնում է Եդեսիայում: Ինքն էլ է մնում Եդեսիայում, օգտվում տեղի հարուստ գրադարանից:

Մաշտոցյան հանճարի ուժով, շուրջ 405 թվականին Եդեսիայում արարվում են հայոց գրերը: Դրանք հայերենի հնչյունական համակարգը ճշտորեն արտա-

հայտող, ինչպես նաև ուսուցման և թարգմանական աշխատանքների համար միանգամայն հարմար տառեր էին:

Եդեսիայում Մաշտոցը նորագյուտ 36 տառերը դասավորում է հունական այբուբենի հաջորդականությամբ, նրանց տալիս է անուններ (Այբ, Բեն, Գիմ... Քե), որոշում թվային արժեքները (Ա = 1, Ժ = 10, Ճ = 100), հաստատում ձախից աջ և հորիզոնական եղանակով գրելաձևը (հունարենի նման):

Այնուհետև մեկնելով Սամոսատ՝ նա հույն հմուտ գրագիր Հռոփանոսի օգնությամբ վերջնական տեսքի է բերում նորագյուտ տառերի գծապատկերները: Եվ հենց Սամոսատում Մաշտոցն իր աշակերտներին սկսում է ուսուցանել նոր տառերով: Հովհան Եկեղեցացու և Հովսեփ Պաղնացու հետ սկսում է նոր գրերով հայերեն թարգմանել Աստվածաշնչի գրքերից մեկը՝ Սողոմոն Իմաստունի առակները: Մեսրոպյան տառերով առաջին հայերեն նախադասությունն է՝ **ՃԱՆԱԶԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԽՐԱՏ, ԻՄԱՆԱԼ ԶԲԱՆՍ ՀԱՆՃԱՐՈՅ** (Ճանաչել իմաստություն և խրատ, իմանալ հանճարի խոսքերը):

Այս նախադասությունը դարձավ հայ ազգային մտավոր շարժման նշանաբանը, հայ մեծ ուսուցչապետի սրբազան պատվիրանը բոլոր գալիք սերունդներին:

Սողոմոնի առակները թարգմանելիս՝ Մաշտոցը հիմնեց հայերենի ուղղագրությունը, որն, ընդհանուր առմամբ, պահպանվեց ողջ միջնադարում և նոր գրականության շրջանում: Մեսրոպյան այբուբենը միջին դարերում համալրվեց **օ** և **ֆ** տառերով:

Նորագյուտ գրերով Մեսրոպ Մաշտոցը վերադառնում է հայրենիք: Նրան մեծ ցնծությամբ ու տոնախմբությամբ է դիմավորում Հայոց մայրաքաղաք Վաղարշապատը: Երկրում ծավալվում ու ծաղկում է ազգային դպրությունը, սկսվում է թարգմանչական շարժումը, ամենուրեք հիմնվում են հայկական դպրոցներ, հայ գրչության կենտրոններ ու գրադարաններ, հայանում են Հայ եկեղեցու ծիսական կարգն ու քարոզչությունը:

Մաշտոցը Սահակ Պարթևի և աշակերտների հետ շարունակում է Աստվածաշնչի թարգմանությունը՝ մի մասն ասորերենից, մյուս մասը՝ հունարենից: Կարճ ժամանակամիջոցում իրագործվում է Սուրբ Գրքի հիմնական մասի նախնական փոթանակի (հապշտապ) կոչվող թարգմանությունը:

Հատկապես այդ գործի ավարտից հետո Մաշտոցը, աշակերտներով հանդերձ, բազմիցս շրջագայում է Հայաստանի՝ պետականությունը դեռևս պահպանած արևելյան մասի գավառներում, հավաքագրում նոր աշակերտների, հիմնում դպրոցներ, գրչության և գիտության կենտրոններ: Նա Գրիգոր Լուսավորչի հիմնադրած Ամարասի վանքում բացում է Արցախի առաջին դպրոցը:

Մեծ ուսուցչապետը լինում է նաև Հայաստանի՝ բյուզանդական գերիշխանության տակ հայտնված արևմտյան մասում: Այստեղ, սակայն, նրան թույլ չի տրվում ազգային-լուսավորական գործունեություն ծավալել: Այդ ժամանակ (մոտ 420-422 թվականներին) Մաշտոցը մեկնում է Կոստանդնուպոլիս, հանդիպում Թեոդոս 2-րդ կայսեր հետ, որից ստանալով հայ մանուկներին մայրենի լեզվով կրթելու իրավունք՝ Հայաստանի արևմտյան մասում ևս հիմնում է հայկական կրթական ու մշակութային կենտրոններ: Այստեղ նա, ավելի ուշ, այցելում է ևս մեկ անգամ:

Մաշտոցը լինում է նաև Հայաստանի հոգևոր-մշակութային ազդեցության տակ գտնվող Վրաստանում (Վիրք), որտեղ վրաց Բակուր թագավորի օրոք (416-429) ստեղծում է նաև վրացական գիրը (խուցուրի): Ստեղծում է նաև աղվանական գիրը՝ Բուն Աղվանքի (Կուր գետի ձախ ավիին) ամենախոշոր ցեղի՝ գարգարացիների լեզվի համար, և անձամբ այցելելով այդ երկիրը՝ հիմնում է նաև աղվանական դպրոցներ...

431 թվականին Մաշտոցի աշակերտներ Ղևոնդ Վանանդեցին, Կորյունը, Եզնիկ Կողբացին և Հովսեփ Պաղնացին Կոստանդնուպոլսից բերում են Աստվածաշնչի Հին Կտակարանի գրքերի հունարեն հնագույն և լավագույն թարգմանությունը («Յոթանասնից») և այլ կարևոր գրականություն: Մինչև 439 թվականը կատարվում են Աստվածաշնչի նախնական թարգմանության էական խմբագրումն ու համալրումը:

Մերոպ Մաշտոցը վախճանվել է 440 թվականին Վաղարշապատում և թաղվել Օշական գյուղում, որը ժամանակի Հայոց հազարապետ Վահան Ամատունու կալվածքն էր: Երեք տարի անց Ամատունի իշխանն Օշականում եկեղեցի է կառուցում և համազգային հանճարեղ գործչի աճյունը, որպես մասունք, տեղափոխում է այնտեղ: Այս դամբարան-եկեղեցին եղել և մնում է սրբազան ուխտատեղի:

Հայ առաքելական եկեղեցին Մերոպ Մաշտոցին դասել է իր ազգային սրբերի շարքը և տարին երկու անգամ տոնում է նրա հիշատակը՝ մեկը՝ Սահակ Պարթևի հետ, մյուսը՝ որպես գլուխ Սուրբ թարգմանչաց: Նրա անունն է կրում հայկական ամենահարուստ ձեռագրատունը՝ Մատենադարանը, որտեղ պահպանվում են տասնյակ հազարավոր մերոպատառ գրչագիր մատյաններ...

Հայոց գրերի արարիչ Մերոպ Մաշտոցը հայալեզու-հայագիր դպրոցի ու հայ մանկավարժության հիմնադիրն է և հայ առաջին ուսուցչապետը՝ Սահակ Պարթևի հետ միասին: Ուստիև 5-րդ դարի հայ դպրությունը կոչվում է Սահակ-Մերոպյան:

Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը լինելով հայերենի առաջին ուսուցիչները՝ մշակել են հայկական նորաստեղծ դպրոցներում ուսուցանվող առարկաների դասավանդման սկզբունքները՝ ազգային լեզվի և հոգևոր արժեքների համակարգի հիման վրա:

Դարձյալ Սահակ Պարթևի հետ միասին՝ Մաշտոցը հիմնադրել է հայ մասնագիտական երաժշտությունը, կարգավորել հայկական ձայնեղանակները և օգտագործել եկեղեցական հայալեզու ժամերգության մեջ: Նրանք են որոշ եկեղեցական ծիսական մատյանների (Ժամագիրք, Պատարագատետր, Մաշտոց) նախնական օրինակների կազմողները:

Նրանք են սկզբնավորել եկեղեցական պաշտոներգության համար անհրաժեշտ մեր առաջին օրհներգերը: Այդ երգերը բազմացան մինչև 14-րդ դարը և կոչվեցին շարականներ: Երաժշտական և բանաստեղծական ժանր հանդիսացող օրհներգ-շարականներն ընդգրկված են Հայ եկեղեցու պաշտոներգության մեջ և նվիրված են եկեղեցական տոներին ու սրբերի հիշատակին: Դրանք հավաքված են «Շարակնոց» եկեղեցական մատյանում:

Մեսրոպ Մաշտոցի շարականները, Սահակ Պարթևի համանման ստեղծագործությունների հետ միասին, վաղմիջնադարյան հայ գրավոր-անհատական բանաստեղծության առաջնեկներն են և հայ երգարվեստի առաջին դասական նմուշները:

Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը գրել են նաև ժամանակի գեղարվեստական արձակը ներկայացնող ճարտասանական գործեր՝ ճառեր, թղթեր (ուղերձ-նամակներ)՝ փաստորեն հիմնելով հայ միջնադարյան գրականությունն իր երկու սեռերով:

Հայ և օտարազգի մեծերը Մաշտոցի և հայոց լեզվի մասին

«Մտքով՝ ստեղծող, խոսքով՝ պայծառ, գործով՝ համբերող, սիրով՝ անկեղծ, սովորեցնելու մեջ՝ չձանձրացող, և որ նրա (Մեսրոպ Մաշտոցի) վարքի մեջ ամբարտապանությունը և մարդահաճությունը երբեք չկարողացան տեղ գտնել»:

Մովսես Խորենացի (Պատմահայր)

«Մեսրոպ Մաշտոցի գյուտը, անտարակույս, այն հզոր զենքն էր, որի շնորհիվ հայ ժողովուրդը պահպանեց իր գոյությունը V դարի մեծ պայքարում և մտնելով քաղաքակրթված հնագույն ժողովուրդների ընտանիքի մեջ՝ զարգացրեց իր ինքնուրույն մշակույթն ու շատ հարուստ գրականությունը»:

Հակոբ Մանանդյան (պատմաբան)

«Մայրենի լեզվի բառերը մենք զգում ենք, ապրում, իսկ օտար լեզվինը՝ հասկանում, սովորում, հիշում»:

«Մեր լեզուն բարձր լեռներից և խորունկ ձորերից ծնած լեզու է՝ բարձունքների և խորությունների լեզու»:

«Լեզուն փոխարինել է և պետություն, և բանակ, և բերդ: Ժողովուրդների պատմական փորձը ապացուցեց, որ երբ մի ուրնահարված, ստրկացած ժողովուրդ պահում է իր լեզուն, նա ունի իր ազատության բանալին իր ձեռքում»:

«Հայոց լեզվի մեջ մարմնացած է հայ ժողովրդի հոգին: Ամեն մի բառը նրա հոգու մի կտորն է»:

«...Նրա համար ծով արյուն են թափել մեր նախնիները»:

Ավետիք Իսահակյան

«Լեզուն ազգի հոգին է. կենդանի է այդ հոգին, կենդանի է ազգը, կենսունակ է առաջինը, ուրեմն կենսունակ է և երկրորդը»:

Վահան Տերյան

«Ով մեր լեզուն, հայելի մաքրության, գորովի և արիության, դուն մեր հոգի և արյունն ես, դուն մեր զրահն ու մեր փառքն ես»:

Արշակ Չոպանյան

«...փառք հայ փառերուն...»

«Հայ լեզուն այդ փառերու սանդղամատերուն վրա ուրն առ ուրն բարձրացավ ամեն դարու ճակատին վրա՝ հոն փորագրելու համար անմահությունը մեր ցեղի»:

Դանիել Վարուժան

Ստարազգի մեծերը հայոց լեզվի և մերոպ մաշտոցի մասին

«Ինչ էլ սպասելիս լինի նրանց (հայերին) ապագայում, նրանց երկիրը միշտ պետք է մնա որպես ամենից ավելի հեղափոխականներից մեկն ամբողջ հողագնդում, և արդեն իսկ նրանց լեզուն... մեծ ուսումնասիրություն է պահանջում... Ճոխ է հայոց լեզուն, և առապորեն կվարձավորվի նա, ով կուսումնասիրի այն: Ես փորձում եմ, իմ փորձն առաջ է ընթանում» :

Ջորջ Բայրոն (անգլիացի բանաստեղծ)

«Ձեր հնամենի լեզուն ես չգիտեմ, բայց սիրում եմ այն: Դրա մեջ Արևելքն եմ զգում, դարերն եմ նշմարում այնտեղ, տեսնում եմ անցյալի խորհրդավոր նշույլի շողարձակումը: Ինձ համար պարծանք է հայերեն թարգմանվելը»:

Վիկտոր Հյուգո (ֆրանսիացի գրող)

«Միջնադարյան ռո՛ ժողովուրդը կկարողանա պարծենալ, թե երբևիցե իր սեփական լեզվով կամ թեկուզ մի այլ՝ բախտավոր լատիներենով հրապարակ է հանել Վարդանի և իր ընկերների դյուցազնամարտի այնպիսի մի նկարագրություն, ինչպիսին Եղիշեի նկարագրածն է» :

«Եթե նկարի առնենք պատմական այն բացառիկ, ծանր իրադրությունը, որի մեջ Մաշտոցը կարողացավ արթնացնել հայ ժողովրդի ազգային գիտակցությունը, և նրա այդ գործը համեմատենք Պիպինոսի և նրա զինակից Զիգֆրիդի գործունեության հետ, որ նրանք արին գերմանական ժողովրդի համար՝ այս վերջինները «խեղճ թզուկներ» կերևան մտքի այդ հսկայի համեմատությամբ»:

Մարկվարտ (գերմանացի գիրնական, հայագետ)

«... Զբաղմունքներուս նյութը այսօր: Մեկն ու միակը՝ հայերենը: Գրաբարը, հայոց բարբառները: Այս է իմ սիրուս առարկան: Մի զարմանալի մասնավոր շնորհ ունեցող այս լեզուն, որ այսօր իսկ զորություն ունի ազապորեն և սպույզ արտահայտելու գիտական ճշտորոշ միտքը, փիլիսոփայական գաղափարները և բանաստեղծական նրբին, բազմերանգ կիսաստվերները միաժամանակ: Կյանքիս ամեն մի վայրկյանը նվիրված է այդ ուսումնասիրությանը»:

«... Իմ գիրցած լեզուններուն մեջ հայերենը բացառիկ է... նախ՝ որպես զարմանալի տրամաբանական լեզու, ապա նաև՝ իր ճկունությամբ, նոր բառեր կազմելու դյուրություններով»:

Ֆրեդերիկ Ֆելդի (ֆրանսիացի հայագետ)

«... Հայոց լեզվի մյուս կողմը, որ արժանի է հիացմունքի, նրա բառային և ոճային հարստությունն է: Այս առանձնահատկությունը հայ բանաստեղծներին հնարավորություն է տալիս համաշխարհային գրականության գանձերը բոլոր նրբերանգներով թարգմանելու հայերեն: Եվ բառապաշարի հենց այդ հարստությունն է, որ դժվարություն է հարուցում օտարազգի թարգմանիչներին հայ գրականությունն իրենց լեզուներով թարգմանելիս»:

«Մաշտոցի հրաշալի ստեղծագործության՝ հայկական այբուբենի կարգաբերությունը աշխարհի մեծագույն լեզվաբանների զարմանքն է առաջացրել...»:

Էդմոնդ Շուց (հունգարացի բանասեր, դոկտոր)

«Հայ այբուբենը զլուխգործոց մըն է: Հայ հնչյունաբանության հնչյուններեն յուրաքանչյուրը հարուկ նշանով մը նոթագրված է, և համակարգը այնքան լավ հաստատված է, որ հայ ազգին հայթայթած է հնչաբանության վերջնական արտահայտություն մը, արտահայտություն, որ պահպանված է մինչև այսօր՝ առանց փոփոխություն մը կրելու: Արոր հետևանքով Հայաստան ունեցավ ճկուն գրական լեզու մը, որ հայուն բառապաշարին բոլոր արժեքները կարտաբերե»:

Անրուան Մեյե (ֆրանսիացի գիտնական, հայագետ)

«Լատիներենի այբուբենը, հայերենի այբուբենը նշագրության զարմանալի օրինակներ են, որն անվանում ենք հնչութային: Ժամանակակից վերլուծողը գրեթե ոչինչ չի կարող փոխել այստեղ. հաշվի են առնված իրական արարելությունները, յուրաքանչյուր տառ միշտ համապատասխանում է միայն մեկ հնչույթի, յուրաքանչյուր հնչույթ միշտ վերարտադրվում է նույն տառով»:

Էմիլ Բենվենիսպ (ֆրանսիացի լեզվաբան)



Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ւմ կողմից և երբ Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակվեց:
2. Երբ հիմնադրվեց Էջմիածնի Մայր տաճարը:
3. Նոր կրոնի տարածումը ո՞վ գլխավորեց, և ինչո՞ւ Հայ եկեղեցու դավանանքը կոչվեց Լուսավորչական կամ Գրիգորյան:
4. Ինչո՞վ էր պայմանավորված հայկական գիր-գրականության ստեղծման անհրաժեշտությունը: Հիմնավորել դասանյութից բերված օրինակներով:
5. Ո՞րն էր Մեսրոպ Մաշտոցի դերը հայ գրի ու գրականության ստեղծման գործում: Ասածը հիմնավորող փաստեր բերեք:
6. Մեկնաբանիր հետևյալ միտքը. «ՃԱՆԱԶԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԽՐԱՏ, ԻՄԱՆԱԼ ԶԲԱՆՍ ՀԱՆՃԱՐՈՅ» (Ճանաչել իմաստություն և խրատ, իմանալ հանճարի խոսքերը) (անհատական աշխատանք):
7. Կենսագրությունից ելնելով՝ գնահատե՛ք Մաշտոցի կյանքն ու ստեղծագործությունը նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում:
8. Արտահայտիր կարծիքդ Մաշտոցի կյանքի մասին և նրա կյանքի պատմությունը կապիր իրականության և ժամանակաշրջանի անցուդարձի հետ (անհատական աշխատանք):



ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայ ազգային ինքնուրույն գրականություն հիմնելուց առաջ անհրաժեշտ է եղել հայացնել համաշխարհային գրավոր մշակույթի նվաճումները: Այս իսկ պատճառով Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևն իրենց աշակերտների հետ միասին նախ ծավալել են թարգմանչական բեղուն գործունեություն: Սկսվել է թարգմանչաց շարժումը:

Բնականաբար, առաջինը թարգմանվել է քրիստոնեական Սուրբ Գիրքը՝ Աստվածաշունչը: Սուրբ Գրքի գլխավոր թարգմանիչներն են համարվում Սահակ Պարթևը, Հովսեփ Պաղնացին, Կորյունը, Ղևոնդ Վանանդեցին և Հովհաննես Եկեղեցացին: Աստվածաշնչի այդ թարգմանությունը համարվել է «թարգմանությունների թագուհի»:

Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի ավագ և կրտսեր աշակերտներից ոմանք կատարել են նաև այլ թարգմանություններ հունական և ասորական գրականությունից. առաջին հերթին՝ այն գործերը, որոնք անհրաժեշտ էին Հայ եկեղեցու և դպրոցների կարիքները հոգալու համար: Կատարվել են նաև փիլիսոփայական, պատմական, ժամանակագրական, բնագիտական, քերականական և այլ բնույթի երկերի թարգմանություններ: Նշենք, որ այդ ժամանակ թարգմանված ստեղծագործությունների մի մասն այժմ աշխարհին հայտնի է միայն հայերեն թարգմանություններով, քանի որ դրանց հունարեն կամ ասորերեն բնագրերը չեն պահպանվել:

Թարգմանական գրականության հիման վրա շատ կարճ ժամանակամիջոցում երևան եկավ 5-րդ դարի ինքնուրույն հայ գրականությունը՝ մատենագրությունը: Այն ընդգրկում է տարբեր ժանրերով գրված կրոնական, պատմական, գիտական, գեղարվեստական երկեր:

Բազմաբնույթ ու բազմահարուստ այդ գրականության ստեղծման դարաշրջանը կոչվեց Ոսկեդար, իսկ ժամանակի գրական լեզուն՝ ոսկեղենիկ գրաբար...

Ոսկեդարում սկզբնավորված հայ գրականությունն իր էությամբ միջնադարյան է: Դա գրականության մի առանձին համակարգ է, որ հիմնված է քրիստոնեական գաղափարների ու բարոյախոսության վրա, և նրա կենտրոնական դեմքն ու բարձրագույն իդեալը քրիստոնեական Աստվածն է...

Ոսկեդարի հարուստ գրական ժառանգությունը ներկայացնում է հայ միջնադարյան գրականության առաջին շրջանը: Դրան հետևում են պատմական հանգամանքներով պայմանավորված մի շարք փուլեր, որոնք նշանավորում են

միջնադարյան հայ գրականության նոր ձեռքբերումներն ու փոխակերպումները, վերելքներն ու վայրէջքները:

Ոսկեդարի հայ գրականության առաջին հուշարձանները ստեղծեցին Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը: Նրանցից հետո հոգևոր երգեր և ճարտասանական գործեր հեղինակեցին նաև նրանց աշակերտները: Ժամանակի խոշոր աստվածաբան-փիլիսոփաներից հիշատակելի են Եզնիկ Կողբացին և Դավիթ Անհաղթը:

Ոսկեդարում ստեղծվեցին նաև ժամանակի գեղարվեստական արձակի մեկ այլ բնագավառը ներկայացնող վկայաբանական և վարքագրական երկեր:

Վկայաբանությունները բովանդակում են քրիստոնեական հավատի համար զոհված և սրբացված մարդկանց նահատակության, իսկ վարքերը՝ սրբերի կյանքի պատմությունը:

Նշանավոր է Մեսրոպ Մաշտոցի աշակերտ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը, որտեղ հեղինակը հանձին իր մեծ ուսուցչի՝ կերտել է հայ կրթական, լուսավորական գործչի, գաղափարական հերոսի առաջին պատմական-գեղարվեստական կերպարը:

5-րդ դարի վկայաբանություններից նշանավոր է սպարապետ Վարդան Մամիկոնյանի դուստր Շուշանիկ Վարդենիի նահատակության պատմությունը:

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ոսկեդարի մատենագրության ամենահարուստ բաժինը պատմագրությունն է: Հայտնի են այս շրջանի հինգ խոշոր պատմիչներ՝ Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի, Եղիշե և Ղազար Փարպեցի: Նրանց երկերը պատմական մեծարժեք աշխատություններ են, որոնք ընդգրկում են հայ ժողովրդի պատմությանը վերաբերող կարևոր տեղեկություններ:

Պատմիչներն օգտագործել են ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր աղբյուրներ՝ հին բանահյուսության ոգով հյուսված վաղ միջնադարյան վիպերգեր, դյուցազներգական ասքեր: Այդպիսին է տարբեր վիպական զրույցներից բաղկացած «Պարսից պատերազմ» կոչված ավանդավեպը, որը պատկերում է հայ ժողովրդի երկարատև հերոսական պայքարը պարսկական բռնատիրության դեմ: Այդպիսին են նաև Հայաստանում քրիստոնեության տարածման, Գրիգոր Լուսավորչի, Հռիփսիմյան կույսերի և որոշ այլ դեպքերի ու դեմքերի շուրջ հյուսված զրույցներն ու ավանդությունները:

Ոսկեդարի պատմիչները հաճախ ձգտել են պատմական փաստերը շարա-

դրել գեղարվեստական շնչով, պատկերավոր լեզվով, ճարտասանական հնարանքներով, ինչպես նաև հայրենասիրական ու ազատասիրական ոգով: Այդ երկերում հաճախ իրական անձինք հանդես են բերված իբրև պատմական-գեղարվեստական կերպարներ: Հետևաբար՝ 5-րդ դարի պատմագրական երկերը և նրանց խոր ազդեցությամբ գրված հետագա պատմությունները, հավաստի սկզբնաղբյուրներ լինելով հանդերձ, հայ միջնադարյան գեղարվեստական արձակի յուրօրինակ նմուշներ են:



Հարցեր և առաջադրանքներ

1. Ովքեր են համարվում քրիստոնեական Սուրբ գրքի՝ Աստվածաշնչի գլխավոր թարգմանիչները:
2. Ո՞ր դարում ձևավորվեց ու զարգացավ ինքնուրույն հայ գրականությունը՝ մատենագրությունը:
3. Ովքեր են հայ առաջին թարգմանիչները, թվարկե՛ք՝ ինչ գործեր են թարգմանել:
4. Ի՞նչ էին բովանդակում վկայաբանությունները և վարքերը: Նշի՛ր նմանությունները և տարբերությունները: Բեր օրինակներ:
5. Թվարկի՛ր ոսկեդարի պատմագրության կարկառուն դեմքերի անունները: Զուգահեռներ անցկացրու այլ ազգերի նույն դարաշրջանի պատմագիրների հետ: